ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2025թ. № 190

ՍՏԱՍԻԿ ԼՅՈՎԱՅԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ մարզիկ Ստասիկ Լյովայի Նազարյանը Հայաստանի Հանրապետության ՊԱՐԱ լեռնադահուկային սպորտի մեծահասակների առաջնության տղամարդկանց «ՀՍԿԱ ՈԼՈՐԱՎԱՅՐԷՋՔ» մրցաձևում զբաղեցրել է 1-ին տեղը, հիմք ընդունելով Ստասիկ Լյովայի Նազարյանի դիմումը, Հայաստանի դահուկային սպորտի և սնոուբորդի ֆեդերացիայի կողմից տրված դիպլոմը, ինչպես նաև Հայաստանի Ձմեռային Պարամարզաձևերի Ֆեդերացիայի տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի՝ «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից տրամադրել միանվագ դրամական պարգևատրում 100 000 ՀՀ դրամի չափով:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. մարտի 7
ք.Սպիտակ